ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 2 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երևան 19 մարտի 2015թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի
թիվ 2 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Ա. Խաչատրյանի
Անդամակցությամբ՝ Ֆ. Թոխյանի
Կ. Բալայանի

Ուսումնասիրելով «Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» ՀԿ-ի և քաղաքացի Հեղինե Մակարյանի անհատական դիմումով գործը քննության ընդունելու մասին հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց.

Համաձայն ՀՀ Սահմանադրության 42.1-րդ հոդվածի և 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ «Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» ՀԿ-ն և քաղաքացի Հեղինե Մակարյանը դիմել են ՀՀ սահմանադրական դատարան (դիմումը ՀՀ սահմանադրական դատարան է մուտքագրվել 2015 թվականի փետրվարի 26-ին)՝ խնդրելով՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 404-րդ հոդվածի 4-րդ մասը ճանաչել ՀՀ Սահմանադրության 3, 6, 14.1., 18, 19 և 20-րդ հոդվածներին հակասող և անվավեր:

1. Դիմողները գտնում են, որ «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 10.06.2014թ. ՀՀ օրենքով նոր խմբագրությամբ շարադրվեց ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 404-րդ հոդվածի 4-րդ մասը, որի համաձայն՝ վճռաբեկ բողոքը միայն փաստաբանի միջոցով կարելի է մուտքագրել ՀՀ վճռաբեկ դատարան, ինչը սահմանափակում է եռաստիճան դատական համակարգում իրավունքների արդյունավետ պաշտպանության հնարավորությունները և խախտում է դատական պաշտպանության և դատարանի մատչելիության՝ անձանց իրավունքները:

Դիմողներն իրենց դիմումում ներկայացրել են նաև այլ փաստարկներ:

2. Ելնելով դիմումի և կից փաստաթղթերի ուսումնասիրությունից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32 և 69-րդ հոդվածների պահանջներով՝ դատական կազմը գտնում է, որ առկա են դիմումի քննության ընդունումը մերժելու հիմքեր՝ հետևյալ պատճառաբանությամբ. դիմողների կողմից վիճարկվող՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 404-րդ հոդվածի 4-րդ մասի սահմանադրականության վերաբերյալ առկա է ՀՀ սահմանադրական դատարանի 2015թ. մարտի 17-ի ՍԴՈ-1196 որոշումը, ինչը, համաձայն «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ կետի, անհատական դիմումի քննության ընդունումը մերժելու հիմք է հանդիսանում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ կետով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց.

«Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» ՀԿ-ի և քաղաքացի Հեղինե Մակարյանի անհատական դիմումով գործի քննության ընդունումը մերժել:

Նախագահող՝

Անդամներ՝

19 մարտի 2015 թվականի
ՍԴԴԿՈ/2-11